

## Կոտայքի մարզպետն այցելել է «Շահնագարյան» գինու-կոնյակի տուն

---

Կոտայքի մարզպետ Ռոմանոս Պետրոսյանն այցելել է Եղվարդ համայնքում գտնվող «Շահնագարյան» գինու-կոնյակի տուն, շրջել գործարանի տարածքում, զրուցել աշխատակիցների հետ, ծանոթացել պայմաններին:

Գործարար ոլորտը շարունակում է մնալ Կառավարության ուշադրության կենտրոնում, և որպես կենտրոնական իշխանությունների ներկայացուցիչ տարածաշրջանում՝ Ռոմանոս Պետրոսյանը պարբերական այցերով ուշադրության կենտրոնում է պահում ոլորտն՝ իր հնարավորություններով և խնդիրներով:

Նպատակն է, որ Հայաստանի մասին՝ որպես սպառող երկրի, ընկալումը վերափոխել արտահանող երկրի, ձևավորել նոր միջավայր ու նոր մոտեցումներ:

Ընկերության գլխավոր տնօրեն Սամվել Շահնագարյանը մարզպետին է ներկայացրել այս պահին գործարանում իրականացվող աշխատանքների ընթացքը, ծավալները: Առաջիկայում տարածքում կբացվի նոր արտադրամաս, կգործարկվեն գինու նոր հոսքագծեր:

«Շահնագարյան» գինու-կոնյակի տունը հիմնադրվել է 2005թ.-ին՝ որպես ընտանեկան ձեռնարկություն: Ընկերությունը հանդես է գալիս կոնյակի, գինու և մրգային օղիների արտադրությամբ՝ երաշխավորելով ապրանքի որակը և առաջնորդվելով հայկական գինեգործության ավանդույթներով:

Գործարանը հանդիսանում է կոնյակի սպիրտի խոշոր արտահանող: Ներկայում այստեղ աշխատում են շուրջ 140 աշխատակիցներ՝ մեծամասնությունը Կոտայքի մարզից: